

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՐ

Նմանագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խւրաքանչիւր տողատողին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Նախաձեռնութեան պահանջ. Ղեկավարող
կենտրոններ. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Փորը
գրականութիւնը. Նամակ Նոր-Բայազէտից. Նա-
մակ Նմանագրութեան. Ներքին լուրեր. ՄԻ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. —
ՀԵՌԱՅԻՐԵՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՄԱՐՆԵՐ. Երազմիս:

ՆԱԽԱԶԵՈՒՆՈՒԹԻՒՆ ՊԱՀԱՆՋ

Իւրաքանչիւր օր Ռուսաստանում մեռ-
նում է թորախտից աւելի քան հազար
հոգի. իսկ ամբողջ տարվայ ընթացքում
ոչ պակաս քան կէս միլիոն անձ: Թիֆ-
լիսում հիւանդացուները կէսից աւելին,
երբեմն մինչև 70% օր ունենում են թո-
քերի տկարութիւններ: Մեր միւս քա-
ղաքներում թորքերի հիւանդութիւնները
առաջին տեղն են ընդունում միւսների շար-
քում:

Տխուր և ճնշիչ են փաստերը: Եւ մի-
այն այսօր չէ, որ նրանք յայտնի են
դարձել հասարակութեանը: Մակայն օրեր
և տարիներ անցնում են, իսկ հասարա-
կութիւնը փորձ չէ անում ինքնապաշտ-
պանութեան և ինքնօգնութեան լուրջ
ձեռնարկութիւններ անելու իրան քայ-
նայող ազէտը վերացնելու կամ թաղաց-
նելու նպատակով:

Թիֆլիս քաղաքը մինչև այժմ չէ փոր-
ձեց նախաձեռնութիւն վերցնելու իր
վրա և հասարակութեան հետ միասին
կազմակերպելու հակաթորախտային մա-
քառման գործը միջոցաւ: Մինչդեռ շատ
էլ աներազեղի մի բան չէ այն, ինչ որ
մենք աչքի առաջ ունենք: Քաղաքային
ինքնավարութիւնը հասարակութեան հետ
միասին կարող են նպաստել, որ քաղաքի

ԲԱՆԱՄԱՐՆԵՐ

Ներքին վիճակի մասին մի քանի խօսք
նախաձեռնութեան պահանջ. Ղեկավարող
կենտրոններ. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Փորը
գրականութիւնը. Նամակ Նոր-Բայազէտից. Նա-
մակ Նմանագրութեան. Ներքին լուրեր. ՄԻ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. —
ՀԵՌԱՅԻՐԵՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՄԱՐՆԵՐ. Երազմիս:

Նրա հակայական դրացին՝ Չինաստանը գործ
է անում արծաթէ վալիւտ (ինչպէս և բրիտա-
նական ձնկապաններ): Այդ երկու երկրների
գործածած վալիւտաները տարբերութիւնը ծնե-
ցնում է անազնի ֆլաններ եւ պայծառական վաճա-
րականութեան համար, բայց նա հեշտացնում է
յարաբերութիւնները միացած լուսաւոր
մարդկութեան հետ, որը վաղուց ընդունել է
սակէ վալիւտը:

Չարմանալի արագութեամբ աճել է եւ պայ-
ծառական պետական հաշիւը իր կամ բերեցէտը:
1886—87 թվականին նրա եկամուտը եղել է
84 միլիոն իէն, իսկ ծախքը՝ 83 միլիոն:
1897—98 թվին արդէն նրա մուտքը հասնում
էր 239 միլիոն իէնի, ելքն էլ նոյնքան: 1898-ից
մինչև մեր օրերը նրա բերեցէտն առնուազը
եւ պայծառական կը լինի՝ մասնաւոր երբ աչքի
առաջ ունենանք, թէ ինչ հակայական թշնա-
մաւ հետ ընդհարմելու էր պարտաւորում նա,
սկսած 1898 թվից, երբ Անգլիան վէյ-Նայ-
վէյը, Գերմանիան Կիսա-Չաուն, Ռուսաստանը
Պորտ-Արտուրը իւրացրին:

1892 թվին եւ պայծառական բանկերում պահե-
տի տուած գումարները հասնում էին 209 մի-
լիոն իէնի, իսկ 1895-ին նրանց գումարը հա-
մար 350 միլիոնի: Իսկ դա նշան է, որ ամ-
բողջ երկրի հարգային հարստութիւնը՝ արագ
աճում է, բարձրացնելով իր հետ և թէ ոչ ամ-
բողջ ժողովրդի բարեկեցութիւնը՝ գոնէ ժողո-

յետ ընկած մասերում առողջական պայ-
մանները բարելավել, որ փորձեր ան-
վեն է ժամանակին և յարմար ընակա-
րաններ շինելու ազգայնականութեան աղ-
քատ մասի համար, ինչպէս այդ անկում
է եւրոպական մեծ քաղաքներում, որ
հիմնական ամարային զաւոթներ
չբաւոր ընտանիքների և մասնաւոր մա-
նուկների համար, որ սկիզբ գրվի անա-
տրիումի հիմնարկութեան մեր երկրի
յարմար տեղերից մէկում:

Մենք հաւատացած ենք, որ երբ քա-
ղաքային ինքնավարութիւնը, միացած բը-
ժակական ընկերութեան հետ, կույ անեն
հասարակութեան, այն ժամանակ հանդէս
կը գան թէ բարեգործներ, որոնք իրանց
կարողութեան մի մասը կը յատկացնեն
այդ համակրելի նպատակին, և թէ մաս-
նաւոր ձեռնարկողներ, որոնք կը կապա-
կերպեն գործը որոշ բաժնեգներ վերցնե-
լով, ինչպէս այդ տեղի ունի արտասահ-
մանեան երկրներում: Այդպիսի գործին
գիտութիւնն էլ իր կողմից օգնութեան
կը հասնէ իր միջոցներով, որպէս զի
սաւառաւորութիւնները հիմնական
ցանց կազմվի Ռուսաստանի բանազան
մասերում և այդպիսով ճանապարհ հարթ-
վի այդ կարևոր գործի առաջադ քարգաց-
ման համար:

Անհրաժեշտ է նախաձեռնութիւն:
Կենտրոն պահանջը զգացվում է ամէն մի-
ջայում, բայց նա բաւարարութիւն չէ
ստանում կազմակերպողների բացակա-
յութեան պատճառով: Իսկ երբ նախա-
ձեռնութիւնը հանդէս կը գայ լուրջ և
հեղինակաւոր կերպով, այն ժամանակ և
կազմակերպութեան ծանր գործը կը մըտ-
նէ իրականացնելու ճանապարհի վրա:

Վրդի մի դասակարգի հարստութիւնը:
Այն երկրներ, որի մէջ փոխառութեան տո-
կոսը շատ բարձր է, կը նշանակէ կամ նա աղ-
քատ երկիր է—նրա մէջ կապիտալիզմը չը կան,
կամ եղած կապիտալիզմին այնքան քիչ են, որ
չեն բաւականացնում գոյութիւն առնող և ա-
րագ աճող ինդուստրիային:

Այդ վերջին դէպքը պարզ նկատվում է Եւ-
պոնիայի վրա: Բանկերում պահանջի դրված
և մասնաւոր կապիտալիստների ձեռքին կը
անազնի դրամաւորութիւնն առանց բացառու-
թեան՝ գործադրված են զանազան արդիւնա-
գործական և այլ շահաւէտ ձեռնարկութիւն-
ների մէջ: Ազատ կապիտալներ հրապարակի
վրա չընկան:

Այն ժամանակ՝ երբ անգլիական հրէշաւոր
մեծութեան «ազգային» կապիտալը պարզել է
իր թեւերը աշխարհի բոլոր մասերի վրա, հեղե-
ղել է և Եւրոպայում, և Տրանսպալլը, և Հնդ-
կաստանը, և Պարսկաստանը, և Չինաստանը,
և նոյն իսկ մեր երկրները, և չը նայելով դրան
մար երկրում դեռ ևս նա այնքան շատ է,
որ նրա գինը հրապարակի վրա հազիւ 3 1/2-
40% է, այդ նոյն ժամանակը եւ պայծառական կա-
պիտալը հրապարակի վրա բերում է 12—13%:
Ի՞նչպէս ազատվել այդ վիճակից: Ի՞նչպէս
զանել է ժամ, քիչ տոկոսով կապիտալ եւ պայ-
ծառական հակայական ձեռնարկութիւնների հա-
մար: Ամենակարճ միջոցն է դիմել—Պարիզի,
Լոնդոնի, Բերլինի բորսաներին և փոխառու-
թիւն անել: Եւ այսպէս էլ եղաւ: 1900
թվին Եւպոնիան Լոնդոնում 250 միլիոն ֆրանկի
փոխառութիւն արեց 40% ուղի:

Բայց արդեօք ամէն մի պէսակա՞ն պար-
սկապար է մի երկրի համար: Ամենին ոչ:
Երբ պետութիւնը պարտք է վերցնում ապար-
դիւն ձեռնարկութիւնների, կամ միայն գործի,
թաղանթների, ծառայողների ու լրտեսների
հաւաքին շատ պահելու համար՝ ինչպէս այդ
անում է մեր երկրի հարեան Թիւրքիան,
բնականաբար այդ պարտքը կորստաբեր է պե-
տութեան համար: Իսկ երբ նա փոխառութիւն
է անում անհրաժեշտ երկաթուղիներ, ջրանցը-

ՂԵԿԱՎԱՐՈՂ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Երկու կենտրոններ այժմ ղեկավարող
և կարգադրող դեր են կատարում պատե-
րագական բեմում: Դրանք են երկու
լուրջ քաղաքներ՝ Մոսկուէն և Սէուլը,
առաջինը Մանջուրիայում, իսկ երկրորդը
Կորէայում:

Մոսկուէնում կենտրոնանում են
ռուսաց զինուորական հաստատութիւնները,
իսկ Սէուլում եւ պայծառական: Երկու քա-
ղաքներն էլ բաւական հեռու են այն տե-
ղերից, ուր կարող են մօտ ապագայում
ընդարձակ տեղի ունենալ հակառակ
բանակների զօրքերը մէջ:

Մոսկուէնը շատ նպաստաւոր դերք ունի,
որովհետեւ գտնվում է խիտ բնակեցրած
մի տեղում և մեծ ճանապարհներով կապ-
ված է ոչ միայն շրջակայքի, այլ և հե-
ռաւոր տեղերի հետ: Մոսկուէնի միջով
անցնում է և մանջուրական երկաթուղին,
որ կապում է Պորտ-Արտուրը Նախաձեռ-
նութեան Նայրիի և Ռուսաստանի հետ:
Մոսկուէնի մէջ և նրա շրջակայքում շատ
շինութիւններ և բնակարաններ կան գոր-
ծերի և զանազան պաշտօնեաների բնա-
կութեան համար, կայ մեծ վաճառանոց,
որ կարող է հայթայթել ամէն տեսակ
մթերքներ անօրեայ գործածութեան հա-
մար:

Սէուլը նոյնպէս յարմարութիւններ ու-
նի, իբրեւ մեծ կենտրոն և վաճառանոց,
շատ մօտ է ծովային հաղորդակցութիւնից,
բայց ցամաքով դէպի Մանջուրիա նա
չունի յարմար ճանապարհներ: Երկաթու-
ղային դիժը կապում է Սէուլը հարաւի
հետ, այն է Ժուլան քաղաքի հետ, բայց
այժմ, երբ կարևոր է զօրքեր տեղափո-
խել դէպի Նալու գետի ափերը, կարևոր

ներ, առևտրական հսկայական նաւեր, համա-
լարաններ, լաբորատորիաներ և այլն հիմնե-
լու, նրանց նոր ու նոր դարկ տալու համար—
դրականապէս կարելի է ասել, որ դա շինա-
բար, անհրաժեշտ փոխառութիւն է:

Մեր ձեռքի տակ չը կան անհրաժեշտ թւեր,
որոնցից պարզ երևային, թէ որքան լինի բա-
նի վրա է ծախսում տարեկան մեզ հետաքը-
րող երկրներ: Այսքանը միայն յայտնի է ընդ-
հանուր պետական իրաւէտից, որ Եւպոնիան
էլ ազատ չէ մնացել XIX դարի երկրորդ կէսի
հանդի ախտից—միլիտարիզմից: Նրա բերե-
ցէտի էլ ամենամեծ մասը կ'անում են բանակի
ու նաւատորմը:

Նրա բանակը դեռ 1900 թվին խղաղ ժա-
մանակը կազմված էր 140,000 մարդուց, իսկ
պատերազմի ժամանակ հասնում է 550,000
հոգու: Նա բաժանված է 13 զինվորականի:
Նրա զէնքերն են արագաձիգ նորագոյն թըն-
դանոթները և 61/2 միլիմետրանոց հրացան-
ները: Եւպոնիան զօրքը վարժեցրած է պրու-
սական զինուորական արհեստի համաձայն:
Պատերազմի ժամանակ բանակը կարելի է ու-
քի հանել (մօբիլիզացիա) զուտ եւրոպական
արագութեամբ—Պատերազմական նաւատորմը
կազմում է մի պատկառելի ուժ: Նրա թւի և
որակի մասին յաճախ է գրվել «Մշակ»-ում,
դրա համար աւելորդ են համարում կանգ
անել: 1895 թվին ազգային ժողովը նաւա-
տորմին յատկացրեց 200 միլիոն իէն (մօտ 400
միլիոն ռուբլի ներկայ կուրսով), որով շին-
վեցան զանազան նաւեր, ի միջի այլոց և 4
զրահակիր և 10 կրէյսեր: 1900 թվին նոյն
նպատակին համար քուէարկվեց կրկին 117 մի-
լիոն իէն կամ 234 միլիոն ռուբլի:

Ներկայումս թէ հայ, թէ ռուս մամուլի մէջ
երևում են բազմաթիւ հետազոտութիւններ,
նկարագրութիւններ ու թողուցիկ նկատողու-
թիւններ Եւպոնիայի մասին: Այսպիսի ծանր
բազմաբան զեմաւոր է պահանջել կենդանի,
զգայուն սրտի տէր մարդկանցից՝ լինել բա-
ցարձակ անկողնակալ: Եւ իսկպէս՝ ինչպէս
էլ պէտք էր սպասել, այդ յօդուածագիրները

էր լաւ ճանապարհ դէպի հիւսիս: Եւ պայ-
ծառական կառավարութիւնը այժմ միայն
սկսում է շինել այդ ուղղութեամբ երկա-
թուղի, որը սակայն կարող է պատրաստ
լինել ամենավաղ մի 4—6 ամսից յետոյ:
Ճանապարհների այդ անյարմարութեան
պատճառով՝ եւ պայծառական զինուորական
շտաբը կարգադրեց, որ զօրքերը այսուհե-
տե ուղարկվեն մեծ մասամբ Յիւնա-
պօ նաւահանգստից դէպի Պէնհան-
պօ քաղաքը, որտեղ այժմ ժողոված է եւ-
պոնական մեծ բանակ:

Այսուհետեւ Մոսկուէնից և Սէուլից
պէտք է սպասենք այն զինուորական ռազ-
մագիտական մեծ կարգադրութիւնները,
որոնցով պէտք է զօրազնդերը առաջ
շարժվեն և պատերազմական գործողու-
թիւնների դիմեն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գրականութեան մէջ էլ երևան են գալիս
մօղային հոսանքներ, որոնք, ինչպէս կենտրո-
նի մէջ, տիրապետում են ամէն տեղ, մոռացնել
են տալիս շատ բան, միակողմանիութեան և
չափազանցութեան են հանում: Մի այդպիսի
երևոյթ էլ այժմ է նկատվում մեր գրականու-
թեան մէջ: Անցեալներում մեր մի յօդուածի
մէջ մենք մատնացրեցինք արեւ, որ վերջին
ժամանակներս սկսել են շատանալ փոքրիկ,
էժանագին հրատարակութիւններ, տեւորակ-
ների, բրօշուրների գրականութիւնը: Օրէցօր
երևան են գալիս նորանոր փաստեր, որոնք
այդ հանգամանքին մի ամբողջ երևոյթի, մի
տեսակ համաճարակի կերպարանք են տալիս:
Մենք ասել էինք, որ առաջին անգամ չէ,
որ մեզանում այդպիսի երևոյթ է առաջ գա-

մեծագոյն մասը վերաբերվում են կողմնակալ
կերպով դէպի հակառակորդ: Մի քանիսը չեն
կարողանում ազատվել դէպի նրան տաճած ա-
տելութիւնից, որովհետեւ չափազանց զգայ-
լանքից: Մենք ընտրել ենք օգտվելու համար
մի օտար աղբիւր—մի ֆրանսիացի պատմա-
բան Մարեշալ, որն իր «XIX դարի պատմու-
թիւնը» լուրջ գրեւորում տալիս է փաստերի
և երևոյթների անկողնակալ գնահատութիւնը:
Այդ միջանակալ անկարելից յետոյ առաջ բե-
րենք մի քանի թւեր Եւպոնիայի ազգային
հարստութեան մասին, որ գտնում ենք «Хар-
бинский Вѣстникъ» լրագրի փետրվարի 5-ի
համարում:

Եւպոնիական բանկի վարչութեան գնահա-
տութեան համաձայն՝ եւ պայծառական ազգային
ամբողջ հարստութիւնը 1902 թվին հաւասար
էր 11,690,000,000 իէնի կամ 23,380,000 (մօտ
23 1/2 միլիարդ) ռուբլու: Նա կազմված է հե-
տևեալ բաժանումներից:

1) Հողային հարստութիւն	14,020,000,000 ռ.
2) Հանքեր	800,000,000 »
3) Անասուններ	160,000,000 »
4) Շէնքեր	3,800,000,000 »
5) Չէնքեր	800,000,000 »
6) Երկաթուղիներ	700,000,000 »
7) Շոգենաւեր	500,000,000 »
8) Ոսկի և արծաթ	400,000,000 »
9) Արդիւն. ձեռնարկութ.	612,000,000 »
10) Ուրիշ գան. արժէքներ	1,600,000,000 »

Պետական պարտքը, որ 1870 թվին հազիւ
9,760,000 ռուբլի էր, 1902-ին հասել էր ար-
դէն 1,090,052,280 ռուբլու:

Քաղաքակիրթ մեծ պետութիւններից ամե-
նաբիւշ պետական պարտք ունեցողն են Հիւ-
սիային Ամերիկայի Միացեալ-Նահանգնե-
րը, որոնց պարտքը հասնում է ներկայումս
1,050,000,000 դոլլարի կամ 5,250 միլիոն
ռուբլու: Իսկ դա բոլոր աշխարհի պետական
պարտքերի 30% է միայն կազմում, ինչպէս ա-
նում է պրոֆէսոր Օգերովը:

Ուսմակ

լիս: Ուժեղացան թակահարները համարեա ամբողջ կիսում նոյնպէս փոքրիկ գրքերի, բնութիւնները եռանդուն հրատարակչութիւն էր նկատուում: Բանը հասել էր այն տեղին, որ Հրատարակչական ընկերութիւնն էլ համարեա ամբողջովին ենթարկվել էր այդ հոսանքին և գտնուում էր, որ 3—5 կօպէկանոց փոքրիկ գրուածքներն են ամենից շատ հարկաւորը, ամենից օգտակարը: Տողերիս գրողը շատ լաւ յիշում է, թէ ինչ գրամանք և տնտեսութիւն առաջացաւ ընկերութեան վարչական մարմիններին մէջ, երբ նա առաջարկեց թարգմանել և հրատարակել Սենկեվիչի «ՅՅ երթում» վեպը: Մի այդպիսի անգին գիրք, որ անկասկած թանկ գին էլ պիտի ունենար, կարող էր գրողին զանազան այնպիսի մի ժամանակ, երբ մի բուրբուլ կարելի էր ամենաքիչը 20 հատ գրքովներ ձեռք բերել:

Փորձը հակառակը ցոյց տուեց: Փորձը այն իրողութիւնը բերեց, որ ընկերութեան հրատարակչութիւններին մէջ ամենալուրջ գործը Սենկեվիչի վեպն է, որ բնութիւնները մոռացվում են, իսկ լաւ գրական աշխատութիւնները ընթերցող հասարակութեան համարանշան են վայելում և գնի թանկութիւնը այնքան էլ մեծ նշանակութիւն չունի: «ՅՅ երթում» շատ լաւ էր ծախվում, չէր նայած, որ նրա գինը 1 ր. 50 կօպէկ էր:

Կարծես հէնց այդ վեպն էր, որ մի քիչ էլ հաստատու հրատարակչութիւններ մտցրեց մեր մէջ: Յարմար դարձաւ, որ հայերի մէջ կայ ընթերցողների մի այնպիսի թիւ, որ կարող է 5—10 կօպէկից աւել փող տալ գրքին, եթէ միայն նա լաւ լինի կապոված, հետաքրքրութիւն պատճառէ: Կարելի է ասել, որ ոչ մի ժողովրդական էթանային հրատարակչութիւն այնպիսի արագութեամբ չէ տարածվել մեզանքում, ինչպէս մեր հաստ և համեմատաբար թանկ արժեքող գրքերը, օրինակ Անտրոնեանի վեպիկները հաւաքածուն: Եթէ լաւ դիտենք գրավաճառութեան հանգամանքները, կը տեսնենք, որ գրքի էթանութիւնը դեռ նրա արագ տարածման գրաւականը չէ: Էթանագին հրատարակչութիւնների վերաբերմամբ էլ գոյություն ունի նոյն անողորմ հարցը—բովանդակութեան հարցը: Ինչ համապատասխանում է ընթերցող հասարակութեան կարիքներին, ժամանակի ստիպողական պահանջներին, նա աւելի շատ է տարածվում, աւելի մեծ շրջաններ է գրաւում: Օրինակ, բժ. Բուդուկեանի և բժ. Արծրունու հանրամատչելի գիտական-առողջապահական բնույթները սպասվում են մի կարծ միջոցում, մինչդեռ կան շատ էթանագին հրատարակչութիւններ, որոնք տարիներով ընկած են գրավաճառանոցներում: Բովանդակութիւն, շնորհ, տաղանդ—սրանք այնպիսի բաներ են, որոնք պիտի վճող նշանակութիւն ունենան ամեն տեղ, էթան գրքի թէ թանկ հատորներին մէջ:

Չը նայած այս պարզ ճշմարտութիւններին, չը նայած իրականութեան առաջացրած համոզիչ փաստներին, մեր հրատարակչների մէջ ներկայումս դարձեալ գերակշռող է հանդիսանում այն տեղեկութիւնը, որ գիրքը պէտք է փողերի լինի և շատ էթան:

Ասացին, որ այս տեղեկութիւնը այժմ մի ամբողջ երկրով, մի ամբողջ հոսանք է կազմում: Մենք պէտք է աչքի առաջ ունենանք այդ երկրով, որ յամենայն դէպս օրվայ տիրող կարծիքն է, որ գնալով աւելի լայն չափեր է ընդունում: Գրական հրապարակչի գրութիւնը նոյնպէս հասարակական աչքի ընկնող հարցերից մէկն է: Եւ մենք ի նկատի ունենք մի շարք յօդուածներով հետեւ այդ փոքր գրականութեան, ցոյց տալ, թէ ինչ է նա տալիս, ցոյց տալ նրա դրական և բացասական կողմերը:

Բայց նախ և առաջ մենք հարկաւոր ենք համարում մի քանի կէտերի լուսաբանութիւն տալ մեր ընթերցողներին:

Բայցն ստորոստայից: Ինչպէս տեսնում է ընթերցողը, վերջին երկուսն են միանման պարագայում: Երբ մարդիկ, որոնք եթէ միաձայն էլ լինեցին, գրեցին մտածեն շատերը, անշուշտ իրանց ձայնը կանցկացնէին շատ խնդիրներ լուծելիս: Սակայն նրանցից մէկը, ըստ երեւոյթի, ձգում է դէպի հիւսիս, իսկ միւսը հարաւ:

Ինչ և իցէ, դուք կարծում էք, որ այդ պարագայում միմեանցից տարբեր մարդիկ օգտակար չեն քաղաքին և հասարակութեան:— Երբեք: Դրանցից իւրաքանչիւրը իր անձնական և սեփական ծառայութիւնը կարող է անել քաղաքին:—Օրինակ, ծառայող և աստիճանաւոր անդամները շաբաթը մի մի գեղեցիկ կարող են գրել թէ վարչութեան և թէ նահանգապետի անունով, առանց մի կօպէկ ծախսի տակ ընկնելու, քանի որ իրանք են գրողները: Գրավաճառը կարող է լաւ մատնանք, թղթեր, գրքեր և այլ «կանցիկներ» պիտոյնք մատակարարել քաղաքային վարչութեան. մագործը անշուշտ իր ձեռքում կը պահէ մի սակագին նոսրը ու ծանր կողմը դէպի իրան կը թեքէ, նախապէս կարող է նախ մատակարարել քաղաքի լապտերներին և այլն:

Սպայեմ թէ այնպէս, ոչ ոք դէմ չէ, որ տեղական հասարակութեան բոլոր դասակարգերի ներկայացուցիչներ մտել են քաղաքային վարչութեան կազմը, իբրեւ կոլեկտիվ հիմնարկութեան, և դա ուրախալի երեւոյթ է միանգամայն: Սակայն շատերը այն կարծիքն ունենան, որ վարչութեան անդամները որքան պարագայումս լուրջ տարբեր են իրարից, նոյնքան էլ կարող են տարբեր լինել և գաղափարով: Այդ հանգամանքը գուցէ ոչ մի դէպքում վիճելի չը լինի, բայց ինչ վերաբերում է նրանց վիճիւնը արձակելուն յօդուած քաղաքի հասարակութեան շահերին,—շատ խնայելի վիճիւններ են արձակում: Իսկ եթէ մի փոքր էլ թողնեն խնամիութեան տեսակէտը և մի կողմ դնեն անձնական քանակութիւնները,—այն ժամանակ իսկապէս պաշտպանած կը լինեն մեր աղքատիկ քաղաքի շահերը:

Մենք մեր նախկին թղթակցութեան մէջ յիշել էինք, որ վարչութեան ֆինանսականը այնքան սուղ է, որ ամեն տարի պարտք է աւելանում, թող թերի մնացած անհրաժեշտ պահանջները: Այդ առիթով մի երկու տարի առաջ երևանի պ. նահանգապետը առաջարկ էր քաղաքային վարչութեան պարտքերը ծածկելու համար կամ աւելացնել քաղաքի հասարակութեան անշարժ կալուածքների գնահատողական տուրքը կամ կողմնակի աղբիւր գտնել:

Ստալին խնդրում քաղաքը չը համաձայնեց, քանի որ առանց այն էլ տեղական ժողովուրդը աղքատութեան պատճառով չէ կարողանում արդէն նշանակված տուրքերը վճարել: Բայց անշարժ կալուածքների վերաբերմամբ, էլ ուր մնաց անկասկած: Իսկ երկրորդ խնդրում աշխատում է նոր աղբիւր գտնել միջոցները աւելացնելու համար: Այդ տեսակէտից վարչութեան անդամներ Գ. Դարբասի և Գ. Միշանեան գեղեցիկ արին վարչութեան քաղաքապետական յափշտակված հողամասերը տուրքերի ենթարկելու վերաբերմամբ, որոնք առանց մի կօպէկ տուրք վճարելու գտնվում են արդ նրա ձեռքում: Այդ առիթով թէ և տիրապետողների կամ օգտվողների կողմից խնդիրներ տեղացին վարչութեան անունով, որոնք խնդրում են չափի լրանց ձեռքում գտնված հողամասերը և գնահատողական տուրքերի ենթարկել, բայց և այնպէս այդ յափշտակված հողաբաժնիկներից դեռ ոչ մի կօպէկ չէ մտել քաղաքային վարչութեան կառույց: Սակայն ո՞վ է մեղաւոր, որ յաճախ այդպիսի հարցերը մնում են միայն լուի հարցեր:

Կուս

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տիվիլուպի, մարտի 1-ին
«Մշակի» 38-րդ համարը շնորհ անցնել, և դա առաջինը չէ. այդպիսի դեպքեր յաճախ կրկնվել են և անցնել տարի: Չը ստանալով այդ համարը մի այսպիսի հետաքրքիր ժամանակ, մանաւանդ որ դուք խոստացել էիք մօտ օրերս ուղարկել «Մշակի» բաժանորդներին Հեռաւոր Արեւելքի քաղաքներում, որոնք թէ մի գրեց այդ համարը իր հետաքրքիր քաղաքային գործիքից: Եւ որ եւ իցէ պատշաճ: Չարմատաւոր էլ չէ. դա մի սովորական երեւոյթ է, որ կատարվում է մանաւանդ մեր Տիվիլուպի պատում: Այսպիսի մի ժամանակ, երբ իւրաքանչիւր մարդ հետաքրքրվում է Հեռաւոր Արեւելքի գործերով եւ ժամ առ ժամ սպասում նոր-նոր լուրերի, պատմանքներով լրագիրները հաւաքվում են եւ միմեանցից ուղարկվում ընթերցողներին: Ինչ վերաբերում է նամակներին, պատմանքներով փոխանցել մի ընդհանուր սովորութիւն է:

Կարծես: Չարմատաւոր բան: Լրագիրների ուղարկումը գուցէ բացարձակ նրաւոր, որ Հեռաւոր Արեւելքով հետաքրքրվողները ուղարկում են կարգաւոր համար: Իսկ թէ լրագիրները կարգաւոր են լինում, դա երեւում է նրանից, որ լրագիրները լինում են հակառակ կողմից ծաղկած, ցարկած, հասցին պոկած եւ վարչականութեամբ նորից կայացած: Բայց ինչով բացատրել նամակների ուղարկումը, կամ քոլորովին կորցնելը: Եթէ որ որանց մէջ Հեռաւոր Արեւելքի մասին ոչինչ չէ լինում գրված, որ հետաքրքրվելով բանան, կարգան եւ վարչականութեամբ նորից կայացնեն: Ուղարկելու պատճառը միմյայն անհրաժեշտ է, իսկ կորցնելու պատճառը— ուղարկելը: Ի հարկէ երկար ուղարկած նամակը տիրոջ չէն յանձնի եւ կը ցոյց տան «ճանապարհ ծնարկորդ»:

Կարգաւոր ուղարկումը սեփական լրագիրը հասնիլ եւ ուրախալի կը լինի իւրաքանչիւրի համար միմյայն այն դէպքում, երբ կարգաւոր չէ ժամանակին եւ կարգին յանձնեն տիրոջը: Բակաւոր դէպքում դա մի անպիտանութիւն եւ մի անտէր է, որին հարկաւոր է վերջ տալ միանգամայն:

Ի զմայ ծառայողների «Нахштра» ընկ. Ս. Փարսիմովիչի
ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ
Այսօր, ուրբաթ, մարտի 5-ին, Թիֆլիսի պարբերական մամուլի խմբագիրները հրաւիրված են Թիֆլիսի քաղաքային ուղարկւայի նիստին, որտեղ պէտք է ըննվի այն հարցը, թէ ինչպէս նպատակաւորաւ կը լինի կազմակերպել քաղաքային վարչութիւնից լուրեր ստանալու գործը տեղական մամուլի օրգանների համար:

Ինչպէս երևում է, ժողովրդական բժշկական դաստիարակչութիւնները, որ կազմակերպվել է Կայսերական Կովկասեան Բժշկական ընկերութեան մշտական մասնախումբը—Թիֆլիսի հասարակ դասին շատ դուրեկան և շահեկան են: Անցեալ երկու շաբաթների դասախօսութիւնները բժշկական պ. Ա. Բարայեանի (Թրքաթուրի մասին հայերէն), Ս. Մուխարիսեան (ժողովրդական մասին ուսերէն), Դիտաամիէի (վատ ցաւի մասին վրացերէն), Ա. Սախախանի (Թուրքաթուրի մասին ուսերէն) մեծ հետաքրքրութիւն գործիքներ ժողովրդի մէջ: Ցանկալի է, որ մեր յարգելի բժշկիչների ապագայ ընթերցումներն այս մեծ պատիւ ընկնեցնում աւելի և աւելի գրաւեն դասին իրանց ժողովուրդը, որ կարող է առողջապահական օգտակար տեղեկութիւնների: Այն ընթերցումների այն շարքը, որ տեղի պիտի ունենայ այս շաբաթ Թիֆլիսի ժողովրդական ընթերցանութիւնների ընկերութեան լսարաններում: Մարտի 6-ին, երեկոյեան 6 1/2 ժամին, Ավալան լսարանում բժ. Ա. Մալալով վրացերէն կը կարդայ—ճանաչել տեսնել մասին: Մարտի 7-ին, կիրակի, երեկոյեան 11 1/2 ժամին նոյն լսարանում բժ. Ա. Մխիթարեանց հայերէն—քոսի մասին: Նոյն տեղում երեկոյեան 6 1/2—7 1/2 ժամին բժ. Ա. Սախախան ուսերէն—Թրքաթուրի մասին: Ժողովրդական ընկերութեան թատրոնի դահլիճում (երկաթուղու կայարանի մօտ) բժ. Ֆեօդորով—ուսերէն: Պոլեմոլոգի մասին: Հաւաքարում պ. Արաքսեանի թատրոնի դահլիճում բժշկացի Ա. Բարայեանց հայերէն—ժողով հիւանդութեան մասին, երեկոյեան 7 ժամին թատրոնի ներկայացման եկած ժողովրդի համար: Ընթերցումների նիւթը դասախօսների կողմից բացատրվելու է մօզական լապտերի պատկերներով:

«КАВКАЗ»-ին հեռագրում են, որ Կայսերական Դիտաթիւններին Ակադեմիայի գրադարանապետ Շմիդտը նշանակվում է կովկասեան թանգարանի և հասարակական գրադարանի գլխավոր օգնական:

Պ եւ տ եր ու ը զ ի ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի թոյլտուութեամբ գիմնազիայի սաները խմբերով կը հաւաքվեն այս կամ այն գիմնազիայում, որպէս զի պարագին իրանց ընտրած առարկաներով դասերից դուրս: Ժողովրդական լուսատուութեան միջնորդութիւնը ցանկալի է համարում և յանձնարարում է միւս գիմնազիաներին և այլ միջնորդարդ դպրոցներին մտցնելու նոյնանման խմբական, դասից դուրս պարագայութիւններ աշակերտներին մէջ:

Թիֆլիսի քաղաքային դպրոցական մասնաժողովի հաւաքած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ ներկայումս քաղաքում կան 19 սկզբնական քաղաքային դպրոցներ: Դրանց մէջ սովորող բոլոր սաների թիւն է 2,246, որոնցից 890-ը ուսու, 730-ը հայ, 586-ը վրացի: Եւ 69-ը ուրիշ ազգութիւններից են: Այդ դեպքում 18-ի համար միայն քրէն տալիս է քաղաքն իր միջոցներից 19,652 բուրք:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ մարտի 1-ից ձեռնարկվելու է (երեւի այժմ արդէն ձեռնարկված է) ճեմարանի փինիստրաբեան գլխաւոր վարչապետների կամ օրգանների վերականգնութիւնը: Այդ ծրագրերը մօտ ժամանակներս քննվել և ընդունվել պետական խորհրդի ընդհանուր ժողովում: Մինչև այդ վերականգնութիւնը բոլոր օրէնսդրական գործողութիւնները կը դադարեն:

Մօսկվայի նահանգական գեմտովն տեղեկութիւն է ստացել, որ պատերազմի պատճառով ճանապարհներ շինելու համար գեմտովններին տրվող նպաստը դադարեցված է: Սովորաբար այդ նպաստները հասնում էին տարեկան 8 միլիոն ռուբլու:

«Новости Дня» լրագրին գրում են, որ կոմս Լ. Ն. Տոլստոյը ներկայումս գրադված է Շչեքսկովով. նա գրում է աշխարհահռչակ անդլիպացու մասին մի ընդարձակ շարադրութիւն:

Մեծ-ԽէնՉԱՆԻ գիւղից մեզ գրում են. «Մեր գիւղում և շրջակայ գիւղերում տարածվել է երեխաներին թշնամի» կարմուկն իր անբաժան հազ ընկերոջ հետ և տանում է իր գոհերին անխնայ»:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Քաղաքիս վաճառական դասակարգի մէջ մի վատ սովորութիւն է մտած, այն է կիրակի և տօն օրերին խանութները բանալ և առևտուր անել: Վաճառականները իրանք այդ վատ սովորութիւնը արդարացնում են նրանով, թէ շրջակայ ուսու գիւղացիները, միայն կիրակի օրերը ազատ լինելով աշխատանքից, գալիս են քաղաք իրանց հարկաւոր պիտոյնքները գնելու: Բացի դրանից, դասական հիմնարկութիւններում ծառայողներ միայն կիրակի օրերին են գալիս առևտուր անելու: Կարծես չէր կարելի պայմանաւորվել, որ ամեն կիրակի օր հերթով մի խանութատէր բաց անէր իր խանութը: Գինեւանքը նոյնպէս բաց լինելով, շրջակայ ուսու գիւղացիները, կիրակի օրերը գալով քաղաք, ամենից առաջ իրանց սուրը դարձաւաճառութիւն են համարում: Ժողով գինեւանքը և իրանց ամբողջ շաբաթվայ աշխատանքի վերջին կօպէկը թողնել այդտեղ»:

«Մշակի» ներկայ համարի հետ մեր բաժանորդներին ուղարկվում է Կ. Աֆրեկեանի տրւել կարանի ծառայողական յայտարարութիւնը:

«Նոր-Ջուղայի Լրագր» թերթում կարդում ենք. «Վերջին 2 տարիների ընթացքում Փերալի գիւղերում խիստ տարածուած էր դիֆտերիա տարափոխիկ հիւանդութիւնը. չափազանց շատ գոհեր է տարել հայաբնակ գիւղերից. Նամակներում (180 տուն է) վախճանվել են 200-ից շատ երեխաներ, Հաղանում մի տարւոյ ընթացքում 85 երեխայ (100 տուն է). Մանգիբարանում 50 (160 տուն), միւս գիւղերում ևս բաւականաչափ գոհեր է տարել: Դժբախտութեամբ այն է, որ այդպիսի երեւոյթներ մեր գիւղական ժողովուրդը վերաբերում է Աստուծոյ, համարելով այդ մի տեսակ պատիւ և սա մի նախապաշարմունք է, որ արդիւնք է տգիտութեան: Բժշկական օգնութեան մասին չեն մտածում, իսկ պարսկականայն նոյն իսկ մեղք են համարում դիմել դեղատուութեան. ոչ մի առողջապահական պայման, ոչ մի դոկտորութիւն չը կայ գիւղերում, մի և նոյն սենեակում միմեանց շորերում պատկում է հիւանդ երեխան առողջի հետ, նոյն ամաններից ուտում, խմում: Ընախան է դիֆտերիան նման վնասակար տարափոխիկ հիւանդութիւնն այսպիսի նպատաւոր պայմաններում կը տարածվի, ամենից բազմաթիւ գոհեր, որպէս մինչև այժմ եղել է: Դժբախտաբար Ջուղայում ևս մուտք է գործել այս հիւանդութիւնը, 7—8 զոհ տարել է: Մի թիւարական է, որ շատերը հասկանալով, անմիջապէս դիմում են բժշկիչներին»:

ՆԱԽԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐԶԸ

Ճապոնացիների հնարագիտութիւնը: Հին ժամանակներում պատերազմի ամենաազնիւ, անպետական ձևը համարվում էր երես առ երես, ճակատ առ ճակատ կռուելը, մենամարտելը: Սակայն հրազենների գործածութիւնը բոլորովին յեղաշրջեց պատերազմ վարելու եղանակի մասին ունեցած հասկացողութիւնը: Այժմ այլ ևս չէ դատապարտվում այն տակտիկան, որի հա-

մաճայն թշնամին աշխատում է յանկարծակիի բերել իր հակառակորդին, լրտեսել նրա գործողությունները, օգուտ քաղել նրա բոլոր սրբախնդրից, խաբար գիշերից, այժմ ամեն բան ներքի է համարվում, բաւական է, որ նա աշտոյութեամբ պատկվի:

Իհն մի քանի ժամանակ առաջ «Новое Время» լրագիրը հաղորդեց հապոնացիների մի խորամանկ վարմունքի մասին: Բաղմաթիւ հապոնացի օֆիցէրներ երկար ժամանակ ապրում են եղել Վլադիվոստոկում իբրև սափրիչ, իբրև խոհարար, իբրև մանրավաճառ, սպասուոր և դիտում, լրտեսում էին ռուսական իշխանութիւնների կարգադրութիւնները, ուսումնասիրում երկրի վիճակը: Պատերազմի յայտարարութիւնից միայն մի քանի օր առաջ, պատահմամբ, այդ խորամանկութիւնը բացվում է. մի ռուս օֆիցէր, բարկանալով, ապտակ է տալիս մի սափրիչի. սա, մոռանալով իր վիճակը, չը կարողանալով տանել այդ անպատուութիւնը իբրև օֆիցէր, բացազանչում է. «ես չեմ կարող տանել այդ անպատուութիւնը. ես ձեզ նման օֆիցէր եմ»:

Նոյն լրագիրը այժմ հապոնական մի այլ հնարագիտութեան մասին է հաղորդում: Ենթադրեցինք իրանց առաջին աշտոյութիւնը Պորտ-Արտուրի ուղղակի մասնակցութեամբ, երբ նրանք քննարկեցին «Բեռլին» գրահաւորին, հետևեալ հնարագիտութեան են պարտական: Պորտ-Արտուրում շատերը համոզված էին, որ պատերազմը տնտեսափելի է, բայց շատերը չէին կարծում, որ պատերազմական գործողութիւնները կարող են շուտով սկսվել, ուստի երբ դիպրոմատիական յարաբերութիւնները խզվեցին, Պորտ-Արտուրի էակադրա-լի վրա ամենքը չը գիտէին այդ բանը. միայն ռուսական էակագրան նոյն գիշերը հրաման է ստանում առաւօտեան ժամը 8-ին արթնանալ շողին և պատրաստ լինել խաբարի հանելու ու գնալու այնտեղ, ուր կը հրամայվի: Երեկոյեան մի քանի ականանաւեր ուղարկվեցին՝ որոնելու թշնամուն, բայց նրանք վերադարձան, յայտնելով թէ թշնամին ոչ մի տեղ չէ երևում: Այդ վերադարձած ականանաւերից երեքը նոյն երեկոյ ուղարկվեցին Իւրիւ:

Եւ անհ գիշերվա ժամը 12-ին Պորտ-Արտուրի մօտեցան մի քանի ականանաւեր, ունենալով իրանց կայմի վրա ռուսական ճրագներ (ամեն մի ազգի նաւերը ունեն իրանց ուրո ճրագը) և ճարցրին ռուսերէն, ինչպէս սովորաբար հարցնում էին ռուսական նաւերը. «բաց է ճանապարհը»: Այդ հարցմունքին, ռուսական էակագրայից պատասխանեցին, «այո, բաց է», կարծելով թէ իրանց ականանաւերն են վերադառնում: Զանազանել մութ գիշեր ժամանակ հապոնական ականանաւերը ռուսականից դժուար էր, որովհետեւ հապոնական ականանաւերը բոլորովին նման են ռուսականին: Եւ դրանք հապոնական ականանաւերն էին, որոնք աշխատում էին, խորամանկութիւն քննարկելով, մտնել Պորտ-Արտուրի նաւահանգիստը:

Երբ այդ ականանաւերից մէկը անցաւ ռուսական կրէյսերների մէկի մօտից և նրան հարցրին բուլգորի միջոցով (բուլգորը մի խողովակ է, որի միջոցով նաւաւերը հրամաններ և ազդանշաններ է տալիս նաւից և խօսում է միւս նաւերի հետ մինչև 4 վերստ հեռավորութեան վրայ), թէ Իւրիւ գնացած ականանաւերից որն է վերադարձողը, ստացվեց պատասխան բուլգորի միջոցով ռուսերէն՝ «Ստորոծվոյ» նաւն է (և, ճշմարիտ, դա Իւրիւն ուղարկված երեք ականանաւերից մէկի անունն էր): Բայց այդ պատասխանին հետ միասին արձակվեց մի ական, որ պայթեց «Բէռլին»-ի տակ. մի և նոյն ժամանակ ռուսաց «Անիւր» գրահաւորը իր ցրացողիցի միջոցով յայտնաբերեց, թէ ռուսական նաւերի մէջ մտած և պատող ականանաւերը թըշնամուն են. իսկ նոյն աղմուկ բարձրացրեց և թնդանութիւնը սկսեցին տեղալ հապոնական ականանաւերի վրա: Դրանցից մէկը իսկոյն կործանվեց ռուսաց հրազեններից, բայց միւսները կարողացան հարուածներ հասցնել «Յէ-սարվիչին», «Բէռլինին» և «Պալլադային» ու հետանալ:

Առաւօտեան ամեն բան պարզվեց. դուրս եկաւ, որ հապոնացիները մտադիր են եղել փակել Պորտ-Արտուրի մուտքը կէքսիւնով, նաւերով և կայքիով լցված նաւերով և մեծ հրդեհ վառել, որի մէջ կարելի լինէր այրել ռուսաց բոլոր գրահաւորները և կրէյսերները: Եթէ «Անիւրը» շուտ նկատած չը լինէր, ով գիտէ, գուցէ նրանք աշտոյութիւն իրանց գո-խային ձեռնարկութիւնը:

Մի աւելի թարմ լուր նորից հաստատում է

այն իրողութիւնը, թէ հապոնացիները ոչ մի բան չեն խնայում քննարկելու ռուս նաւերին: Վլադիվոստոկից հաղորդում են «Berliner Post» լրագիրին, թէ չը նայելով ամենախիստ հսկողութեան, մի քանի օր սրանից առաջ մի հապոնացի հասարակ նաւային բանուր քիչ էր մնացել օդը թռցնէր Վլադիվոստոկի նաւահանգիստը: Բոլոր պատրաստութիւններն արդէն արված էին, բայց տեղական ոստիկանութիւնը տեղեկութիւն ստանալով, կարողացաւ սարսափելի ազէտի առաջն առնել:

—Յայտնա-չինական բարեկամութիւն: «Դէյլի Տելեգրաֆ» անգլիական լրագիրն հետազոտում են, թէ Պէկինի հապոնական դեսպանը հրաման է ստացել կնքել չինական կառավարութեան հետ մի դաշնագիր, որի գործութեամբ Չինաստանը Ենթադրեցինք արամադրութեան ներքոյ պէտք է պնէ իր այն զորքերը, որոնք կենտրոնացած են Կիւնտային սահմանների վրա: Կորէան ևս իր կողմից պէտք է տալ 12,000 զօրք:

—Ինքնիմուլ յուզում են: Բերլինում թէ և զինարական շրջանները անհաւատալի են գտնում անգլիական լրագիրների հարգած այն լուրը, թէ հապոնացիները արդէն մտել են Մուկդէնի գաւառը և գրաւել են Ֆին-Նուան-Չէյն, բայց պետական կանցլէր կոմս Բիւլովը այլ ևս մտադիր չէ հետանալ Բերլինից: Զատիկ տօներին առթիւ, ինչպէս որոշել էր առաջ. նա մտնում է Բերլինում, որովհետեւ արեւելեան-ստիական պատերազմը լուրջ երկիւղներ է պատճառում Բերլինի կառավարող շրջաններին, ի նկատի ունենալով, որ Լոնդոնում չեն դադարում ագիտացիաները Ռուսաստանի դէմ:

—Յայտնալիս «Տակաուգա» գրահապտ իրեկտը: Այս կրէյսերը, որ վերջին կուի ժամանակ Պորտ-Արտուրի առաջ մեծապէս քննարկեց, հապոնական նաւատորմի ամենալաւ նաւերից միին է: Նա շինված է 1885-ին, Անգլիայում, Արմատրոնգի գործարանում: Կորպուսը պողպատապատ է. ունի 300 ֆուտ երկարութիւն և 42 ֆուտ լայնութիւն: Միջին խորութիւնը 18 ֆուտ է, տարողութիւնը՝ 3,709 տոնն: Զրահարութիւնը բաղկացած է երկու 10-գլխավոր Կրուպկան թնդանութիւնից, 6 արգաւաճիգ և 10 գնդակաձիգ թնդանութիւնից: 6 գլխավոր և 10 գնդակաձիգ գործիքներ՝ 8 հատ: Կազմը բաղկացած է 25 օֆիցէրներից և 327 զինուոր-նաւատորմներից:

—Պատրաստվող կողմերի միջև: Այժմ կրած վնասները ծովի վրա: Քրանսիական «Information» լրագիրը գումարում է երկու պատերազմող նաւատորմների կրած վնասները մինչև այսօր: Ենթադրեցինք հետևեալ կորուստներն է ունեցել. «Դաւոս» գրահաւորը փետրվարի 9-ին կորուստ մղեց: Եւ ջարդվել է մեքենան: «Երիթիմա» գրահաւորը փետրվարի 5-ին առաւ ջակողմից. «Յուգո» գրահաւորը ապրիլի 1-ին փչացել է: «Ասալո» գրահաւորը կրէյսերը երեք ուսերից հարուած ստանալով, դեղը ոչնչացել է. «Իլաւսկ» գրահաւորը կրէյսերը փետրվարի 5-ին առաւ ջարդվել է մի հատ հրազեն ոչնչացել է. «Նալուս» և «Ալուսա» գրահաւորը կրէյսերները՝ թեթեւ փետրվարի 5-ին առաւ ջարդվել է: «Տակաուգա» կրէյսերը ընկղմվել է ծովը 26-մուլայի կուի ժամանակ. «Ալաւի» կրէյսերը ընկղմվեց ծովը Պորտ-Արտուրի մօտ, փետրվարի 9-ին. կորուստ կրեց անաւ: «Շիլլա» ընկղմվեց 26-ֆուտի նաւահանգիստում. 2 կորուստ կրեց անաւ: 4 ականանաւ և 4 թնդանութիւն: Նաւ ոչնչացան Պորտ-Արտուրի և 26-մուլայի մօտ: Բացի դրանցից, «Տակաուգա» գրահաւորը և «Օտամա» ու «Տոկիդա» կրէյսերները լուրջ վնասներ կրեցին և տարվեցին Նագասակի:

Այդ ժամանակվայ ընթացքում ռուսները ունեցել են հետևեալ կորուստները. 6 առևտրական նաւ գերել են ընկել. «Բէռլին» գրահաւորը ստացել է ձեղքուածք, այժմ վերադարձվում է. «Յէնարեկի» գրահաւորը նոյնպէս կարկուտվում է. «Պորէլ» գրահաւորը ստացել է թեթեւ վնաս, «Պորտալ» գրահաւորը՝ թեթեւ վնաս. «Պետրալ» գրահաւորը՝ նոյնպէս, «Բախան» գրահաւորը կրէյսերը փետրվարի 5-ին անգլիական տախտակամածի կողմից, «Վալես» կրէյսերը ոչնչացել է 26-մուլայի մօտ, և սպանվել են 52 հոգի: «Անիւր» կրէյսերը արդէն վերադարձվում է. «Պալլադա» կրէյսերը վերադարձվում է. «Անգա» փոխադրական նաւը ստացել է խոշոր վնաս. «Կորէն» թնդանութիւնը ընկղմվել է ծովը 26-մուլայի մօտ. 2 կորուստ կրեց անաւ: 1 ականանաւ ընկղմվել են 26-մուլայի մօտ: 2 ինկաններ խիստ կասկածի վարումով ունեն: Անգլիական լրագիրները մի շարք տեղեկութիւններ են հաղորդում չինացիների մասին:

միւս: Խաբարից հարաւ գտնվող չինացիների վարմունքը շատ կասկածելի է. ռուսները արթնում են, որ չինական պաշտօնականները արգելում են ընդհանրապէս ծախիլ ռուսներին ուսուցիչ այն հիման վրա, թէ Չինաստանը չէ գործէ: Լուր է պտտում, թէ Շանգհայ-Գուա-նում 200 հապոնացիներ կան, չինական զինուորների զգեստով: Ենթադրեցինք ձրաբար ցրվում են Չինաստանում աֆիշներ Պորտ-Արտուրի առան նկարներով:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

3 մարտի

26-ՄԱՐՏ: («Բէյտ. գործ.»): Ռուսական հաղորդագրութիւնների համեմատ, Պալմանդի գիւղում, Պորտ-Արտուրի մօտ, փետրվարի 29-ին ընկղմեցին հապոնական 18 լրտեսներ, որոնք ափ ի վան հապոնական նաւատորմից փետրվարի 26-ին ուղարկվեցին ժամանակ: Նորվեգական այն շոգենաւերը, որոնք բռնված էին Պորտ-Արտուրում թշնամական գործողութիւնները սկսվելու ժամանակից, մարտի 1-ին դուրս եկան ծովը:

ՏՈՒՐՈ: («Բէյտ. գործ.»): Կառավարութիւնը, հաւանական է, որ լրագրութիւններ կը պահանջէ պարլամենտից 150 միլիոն իէնի նոր փոխառութիւն հրատարակելու համար: Պատերազմական անցքերի շնորհիւ, կառավարութիւնը համոզվեց, որ հապոնական վարչութիւնը ամբողջապէս հաստատվել է Ֆորմոզա կղզու վրա. այնտեղ թագաւորում է կատարեալ հանգստութիւն: Տեղացիները աջակցում են պատերազմական փոխառութեան աշտոյութեանը:

ՎԻՊՈ: Վիլիսլմ կայսրը ընդունեց սպանիա-կան թագաւորին կրէյսերի վրա և այցելեց նրան արքայական զբօսանալի վրա: Երեկոյեան ճաշ կայացաւ «Կեօնիգ Ալբերտ» շոգենաւի վրա:

Կ. ՊՈԼԻՍ: Ալեքսանդրիայում ժամախտով հիւանդանալու դէպքի պատճառով, որ մահացաւ երբ ունեցաւ, բաղադրյալին սանիտարական խորհուրդը հրամանագրեց կատարել նաւերի բժշկական քննութիւն և գէղնֆէկցիա:

ՉԼՏՈՒՄՏ, 3 մարտի: Այսօր, առաւօտեան 10 ժամին, Չլատուստը հանդիսաւոր կերպով դիմաւորեց և ճանապարհ գցեց գեներալ-ադմիրալ Կուրոպատիկին: Ժողովուրդը բազմութիւնը Չլատուստի համար անսովոր էր. այնտեղ էին գործարանների բոլոր մարդիկը, կանայք, երեխաներ և պաշտօնական անձինք: Հոգեւորականութիւնը կատարեց կարճատև մաղթներ: Քաղաքից գեներալ Կուրոպատիկին մատուցեցին սուրբ պատկեր և աղ ու հաց և արքունական լեւոնային գործարաններից՝ պատերազմական շքեղ սուր:

ՎՆՇԻՆԳՏՈՆ, («Բէյտ. գործ.»): Չէզոքութեան մասին բացի Չինաստանի պաշտօնական յայտարարութիւնից, պետական դէպրատմանը հաւատարմացումն ստացաւ չինական կառավարութիւնից, որ նա կը պնդէ, որ չինական բոլոր հպատակները խիստ չէզոքութիւն պահպանել երկու պատերազմող կողմերի վերաբերմամբ: Այստեղ կարծում են, որ այդ հնարամանքը կը պակասեցնէ այն երկիւղը, որոնք ստանաւում, թէ հապոնացիները վերջը կը դրեն չինացիներին չէզոքութիւնը որ է և կերպ խախտելու:

ԲԵՐԼԻՆ: Այստեղի կորէյական միասնային կցորդ Գիէնային-Գոն անձնապատկերիւն գործեց:

ՎՆՇԻՆԳՏՈՆ, («Բէյտ. գործ.»): Տօկիոյ լրագիրների հաղորդած տեղեկութիւնների համեմատ, «Վարեալի» երկու սպանված նաւատարների մարմինները, որոնք ավին էին դուրս գցված 26-մուլայի մօտ, հապոնացիները թաղեցին զինուորական պատիւներով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Մարտի 3-ին թագաւոր Կայսրը և Մեր Իշխան Թագաւորանգը այցելեցին Գալիլէի անուանված կղզեակը, ուր տեսան «Բորոլին» և «Օրէլ» էակագրային գրահաւորները:

4 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Միջ խնդրում են հաղորդել, որ Ալեքսանդր Գրիգորիւիչ Ներոյին մահվան լուրը սխալմամբ է երևացել. մեռել է նրա եղբայրը Անդրէյ Գրիգորիւիչ Ներոյին:

ԳԵՆՈՎԱ: Պատերազմի նախին հապոնական դեսպանը մեկնեց Ենթադրեցինք:

ԼՈՆԴՈՆ: Կէմբրիջի դուքսը հիւանդացաւ: ԲԵՐԼԻՆ: Այստեղի դիպրոմատիական շրջան-

ներին հաղորդված է, որ պատերազմում չը մասնակցող եւրոպական պետութիւնները՝ իր ժամանակին աչքի առաջ կունենան, որ հապոնացիները, ինչպէս հաստատում են ռուսները, դործ են ածում թուեւոր գաղեր տարածող լիզիտեան ուսմանը, չը նայելով որ Հապոնայի կոնֆերենցիան բացարձակ արգելիլ է նրանց գործածութիւնը: Այստեղից դէպի հարաւ-արեւմտեան Աֆրիկա են ուղևորվում երեք զուգը գործ տեղական պաշտպանութեան գործի ուժեղացնելու համար:

ՄԻՆԵՆ: Բաւարական բանակի գլխաւոր շտաբը Արեւելեան Ասիա է ուղարկում մայոր Շտէտէնին, որը կը հետեւի հապոնական բանակի գործողութիւններին նրա գլխաւոր բանակատեղից:

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ (Սեփական թղթակցից): Փոխարքայի հրամանով նրա ծովային շտաբը կազմափոխվել է: Արեւելեան ինստիտուտի ուսանողներին նշանակեցին մանջուրական բանակի գլխաւոր շտաբի գործերի մէջ: Պորտ-Արտուրի շրջանը անփոփոխ է. թշնամին չէ երևում:

ՏՈՒՐՈ: («Բէյտ. գործ.»): Կառավարութիւնը վճռեց պարլամենտի մարտի 5-ին սկսվելիք արտակարգ նիստում քննութեան դնել ծխախոտի միւսափառութիւնը ծխախոտից պատրաստված արդիւնքների վրա և տարածելու, ապի հարկ մտցնելու և ուրիշ տուրքերի շատացնելու հարցերը: Այս նոր աղբիւրներից ստացվելիք ընդհանուր արդիւնքը հաշվում է 6,800,000 իէն: Թշնամական գործողութիւններն սկսվելուց մինչև այժմ պատերազմական ծախքը համարում են մօտ 536,000,000 իէն: Այդ ծախքերը յոյս ունեն ծածկելու նոր տուրքերի գումարով, թուղթ փող բաց թողնելով, չը հաստատված փոխառութեամբ և յատուկ պահեստի ֆոնդից փոխառութեամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հրատարակված են հետևեալ Բարձրագոյն ուղարկներ. Ծովակալի երկրորդ օգնական Մորա II-ը նշանակված է Նաղաղ Ուկրաինայի նաւատորմի հրամանատարի շտաբի գլխաւոր, փոխ-ծովակալ Ստարեկ հեռացված է տեղաբնակ պատճառով: Նաղաղ Ուկրաինայի նաւատորմի հրամանատարի պաշտօնից: Թագաւոր Կայսրը մարտի 1-ին շնորհաց էսկադրիական «Բէռլին» գրահաւորի I կարգի կապիտան Շչեպանովիչին շնորհող աստիճանի Ս. Գեորգի շքանշանը՝ փետրվարի 11-ին և 12-ին Պորտ-Արտուրի նաւակայանում ականային յարձակումները յետ մղելու և բրանդերները փչացնելու համար:

4 մարտի

ՎԻՆՆԱ: Երեկոյեան մօտ 7 ժամին լավեց հրացանի սատարիկ ձայն. յայտնվեց, որ Ալեքսանդրովսկայա մատուռի մէջ, Գեորգիւիչիկայա հրապարակի վրա, տեղի ունեցաւ պայթիւն անյայտ անձանց ձեռքով դրված պետարդից: Զարգված են ապակիները. տեղի ունեցան անշուն փնտաւներ:

ԼՈՆԴՈՆ: «Բէյտ. գործ.»): Հաղորդում է Պարիզից, որ լաւ տեղեկ շրջաններում հաւատացնում են, որ Ֆրանսիական և անգլիական կառավարութիւնների միջև բանակցութիւնները այժմ աւարտված են: Կատարեալ համաձայնութիւն է կայացած գաղթականական բոլոր հարցերի և այլ հարցերի վերաբերմամբ, որոնք հետաքրքրում են երկու կառավարութիւններին: Համաձայնութեան ստորագրութիւնը երեկ տեղի կունենայ մի քանի օրից յետոյ:

ՏՈՒՐՈ: («Բէյտ. գործ.»): Պատերազմական ծախքերի ընդհանուր գումարը պատերազմական գործողութիւնների սկսվելու օրից հաշվում է 156 միլիոն իէն: Մինչև ներկայ ժամանակը ծախված է 50 միլիոն, այդ թուում նշանակված են ծախքեր «Նիստեն» և «Վաստուգա» կրէյսերների ձեռք բերելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պաշտօնական տեղեկութիւններ Հեռաւոր Արեւելից չեն ստացված: Դուքս Միխայիլ Գեորգիւիչ Մէլիչեւսկի-Ստրէլեցկի նշանակված է առաջին թնդանութիւնից: Գլխավորի բրիգադայի հրամանատար:

ԱԴԵՆ: («Բէյտ. գործ.»): «Նեպրիկ» շոգենաւը, որը պատերազմական կոնսուլարայով Նիւ-Եօրկից գնում էր Եօփոսամ, հասաւ այստեղ, խուսափելով ռուսական պատերազմական նաւերին հանդիպելուց Միլեքիական ծովում:

ՆԻՒ-ՉՈՒՄԵՆ: («Բէյտ. գործ.»): Հաղորդում են, որ ռուսաց նշանաւոր ոյժեր ամրացան հրաշալի ռազմադիտական դիրքերի վրա Անշան-Չժան ամրացած բազալում: Տեղացիները, որոնք փետրվարի 28-ին հեռացել էին Ֆինլանդից, հաստատում են այն տեղեկութիւնները, որ Եալու գետի մօտ կենտրո-

